

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԻԷ. ՏԱՐԻ. | ՀԱՄԱՐ ՎԵՑՑԵՐՈՐԴ | ՅՈՒՆԻՍ 1894 Թ.

ԾԱՆՈՒՅՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏ-ի անցեալ համարով ծանուցինք որ՝ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍՐՆ ընդունեալ է Վեհափառ Հայրապետի միջնորդութիւնն եւ բարեհաճեալ է թոյլ տալ կաւաւոր նուէրների հանգանակութիւն անել Ռուսիայի թեմերի Հայոց մէջ, ի նպաստ Թիւրքիաբնակ եւ Երեւանի նահանգում բնակող սովատանջ հայերին:

Վեհափառը մաղթելով Երկնաւոր Հօրից Օգոստափառ եւ մարդասէր Կայսեր եւ բոլոր Օգոստափառ գերդաստանի հանար երկար եւ բարեբաստիկ կեանք. կը յուսայ, որ այս Բարձրագոյն թոյլտուութիւնից յետոյ, բարեպաշտ հայ հասարակութիւնը չերմ եռանդով կը շարունակէ օգնութիւն հասցնել իւր սովատանջ հայրենակիցներին:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ մեծ ուրախութեամբ բարեհաճեց կարդալ իւր բարեպաշտ Հայ որդոց նուիրատուութեանց ցանկն, ըստ որում Իւր Հայրապետական սուրբ օրհնութիւնն ուղարկելով ամենքի վրայ, հրամայեց

ոչ միայն իւրաքանչիւրին առանձին կոնդակ օրհնութիւն և շնորհակալութիւն յայտնելու, այլ և «Արարատ»ի մէջ հրատարակել հետզհետէ ստացուող նուիրատուութեանց ցանկը։

Աղքատների օգնութեան մատակարարութիւնը կատարուում է Նորին Վեհափառութեան ս. կոնդակով նշանակած յանձնաժողովի միջոցով, որի անդամները կարևոր դէպքում այցելում են սովատանջ գիւղերն և տեղն ու տեղ վիճակագրում է կարօտեալ ընտանիքների կարիքները։ Բոլոր օգնութիւններն ու նպաստները նշանակւում են յայտնի յանուանէ առանձին ժապաւիներով մատեանում, որ պահուում է յանձնաժողովի նախագահ Մայր Աթոռի բարեշնորհ դանձապահի մօտ։ Յանձնաժողովի բոլոր աշխատանքներն կեդրոնացած են, որ թէ իւրաքանչիւր կարօտեալ օգնութիւն ստանայ և թէ արդարապէս մատակարարուին Ազգի նուիրատուութիւնները սովատանջների կարեաց համեմատ։

«Արարատ»ը իւրաքանչիւր համարում հրատարակելով նուիրատուութեանց ցանկեր, առիթ է գտնում վերստին դրոշմել այստեղ Նորին Վեհափառութեան Ս. Օրհնութեան հաւաստին առ աղքատախնամ և գթասիրտ Հայ ժողովուրդն, որ գիտէ արժանապէս գնահատել իւր սիրեցեալ Հայրապետի հայրական զգացմունքներն, միջոցներ տալով Նորին Վեհափառութեան՝ մխիթարելու Հայաստանեայց Ս. Եկեղեցու չքաւորուած զաւակներին։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊՍԱԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԵՒ

ՇՆՈՐՀԱՁՈՒՐԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՎՃՌԱՏՈՒ ԻՐԱՒԱՏԷՐԸ։

(Շարունակութիւն*)

Թէ ուշադրութեամբ քննենք Հայաստանեայց ս. Եկեղեցու հարուստ կանոնադրութիւնը, կտեսնենք որ դարերի ընթացքում դրուած կանոնները լրացնում են իրար, հաստատուելով առաքելոց և Հայոց ս. Հայրերի կանոնական սկզբանց վրայ։ Նոր դրուած կանոններն առաւել որոշ են արտայայտում եղած կանոնը, կամ խըստացնում են պատիժները կամ թեթևացնում և կամ հին կանոնական սկզբունքներից օգտուելով նոր հանգամանքների համար կանոններ կազմում։ Միայն թէ այդ բոլոր կանոնադրութիւնների մէջ անփոփոխ պահում են Հայաստանեայց ս. Եկեղեցու դաւանական և բարոյական վարդապետութիւնն։ Այլապէս չի էլ կարող լինել, որովհետև Եկեղեցին հիմնուած է աստուածային հիմունքների և կամ Աւետարանի վրայ, իսկ նորա առաջնորդողն է միշտ մի և նոյն սուրբ Հոգին։

Այսպէս մեզնից վեց դար առաջ գրում է Կոստանդին Ա. կաթուղիկոսն իւր մի կանոնական կոնդակի մէջ. «Հրաման է այս առաքելադիր, որ ի տարւոջն երեք անգամ առաջնորդք Եկեղեցւոյ ժողովով տեսանեն զկարգս Եկեղեցւոյ, թէ [illegible] [illegible] [illegible]